

քննութեամբ:

«Կայսերական յաղթերգութիւնը» ոչ միայն Օշականի, այլև ողջ հայութեան բողոքն է կատարուած ոճրագործութիւնների նկատմամբ անտարբեր կեցուածք ընդունած աշխարհի դէմ:

Մ. Ղ.

Երեւանի Պետական Համալսարանի Հայ քանասիրութեան ֆակուլտետ
Հայ նորագոյն գրականութեան ամբիոնի աւագ
գիտաշխատող:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- «Կայսերական յաղթերգութիւն» շարքում տեղ գտած երկերը տպագրուել են 1920թ. Պոլսում լոյս տեսնող «Ճակատամարտ» օրաթերքի տարբեր համարներում: 1922թ. Պոլսում լոյս տեսած «Ժողովուրդներու մեհեանը» գրքի վերջին էջում (128) Օշականը գրում է, թէ «Կայսերական յաղթերգութիւնը» մէկ այլ հատորում շուտով լոյս կը տեսնի: Իսկ թէ ինչ պատճառներով այդ հատորը լոյս չի տեսել, պարզ չէ: Պարզ չէ նաև այն, թէ գրքում գետնեղուած վեց պատմութեանց գատ Օշականը ուրիշ ինչ պատմութեանքներ է ծրագրել ներառել: Հետագայում գրողի ծննդեան 100-ամեակի առիթով այդ գործերը մեկտեղուել են Բէյրութում լոյս տեսած համանուն ժողովածուում:

2.- Նա մեծ դեր է խաղացել Հայկական հարցում՝ իր հակահայ քաղաքականութեամբ սատարելով Սուլթան Աբդուլ Համիդին:

3.- Յակոբ Օշական, «Կայսերական յաղթերգութիւն», Պէյրութ, 1983, էջ 9: (Այս հրատարակութիւնից քաղուած միւս մէջբերումների էջերը կը նշուեն տեղում):

4.- Միայն «Տանտան» պատմութեան շրջում է նշուում «ժայ» բառը և Պոլիս քաղաքի անունը:

5.- Ոչնչացուող ժողովուրդների խնդրին Օշականը անդրադարձել է նաև «Ժողովուրդներու մեհեանը» ժողովածուում:

6.- Օշականի ինքնատիպ ոճի արտայայտութիւններից է նաև միեւնոյն ստեղծագործութեան մէջ տարբեր ժանրերի տարրերի համադրումը: Մեր խնդիրն է ներկայացնել գրողի եղեռնապատումի առանձնայատկութիւնները, ուստի շարքի ժանրային խնդիրներին չենք անդրադարձել:

7.- Կիմ Աղաբեկեան, Յակոբ Օշական, Երեւան, 2006, էջ 90:

8.- Լ. Սեյրանեան, «Խոնարհում դէպի հոգու երկինքը», «Յակոբ Օշական» գիտաժողովի նիւթեր, Երեւան, 2011, էջ 167:

9.- Յ. Օշական, «Համապատկեր արեւմտահայ գրականութեան», Անթիլիաս, 1982, էջ 139:

10.- Մեջբերումը միջնորդաւորուած է. տես Վ. Գաբրիէլեան, Հայոց եղեռնապատումի գրականութիւնը, Եր., 2015, էջ 48:

11.- Յ. Օշական, «Համապատկեր արեւմտահայ գրականութեան», Անթիլիաս, 1982, էջ 122:



Ժամանակ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

«Մեր ցեղը չի հեզներ: Չի կրնար ատել: Իր պատմութեան մէջ ան ամենէն աւելի մեղքացած է»:

+++

[Ծնած ենք] «Երկրի մը մէջ, ուր այդքան անվրդով երազելու համար մարդիկ արծիւ ծնելու չափ խելացի չէին եղած»



Գրիգոր Խանգեան, 1915

Գ Ե Ղ Ա Ն Կ Ա Ր Չ ՈՒ Թ Ի Ի Ն

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՍԱՆ
ԺԱՆՍԵՍԻ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Ներսես Արղ. Ալոյեան

- Բ -

Գոյն, անուղակի գիծ, աներանգ տարածություն, բայց անչափ գունեղ. սպասում, շշուկի աղմուկ լռության մէջ եւ համատարած սէր: Կը բուսն իրարից անջատ մտքեր, որոնց մէջ կարելի է փնտռել յոյզեր կամ գուսպ ասելիք: Սակայն, իրականում դրանք աւելի քան բնութագրող են: Նրանց փնտռելիս ակամայ կանգնում ես որակների կամ բարձրաբժէք հիմքերի վրայ, որոնք ճշգրիտ գծանկարում են մեծ մարդու կերպարը: Նրանց խօսքի եւ գործի արգասիքները համամարդկային են, համընդհանուր: Ահա քէ ինչու են մեծ: Մի տեսակ սահուն համոզումով ընդունուող են, երբ չես էլ մտածում ընդվզելու մասին: Նրանց ճանաչում ես հարիւրների միջից, առանձնացնում եւ անհատական վերաբերմունք ձեւաւորում: Նրանք չեն համոզում, չեն սովորեցնում, նրանք պարզապէս կան եւ եղել են:



«Մաշից իջեցում» 1998

Իւրաքանչիւր մասնագիտութիւն հենց մասնագէտի կողմից նկարագրւում է իւրովի, քանի որ ամէն մարդ իր չափով է գիտակցում իր մասնագիտութեան ասելիքը: Երեւի նկարչութիւնը ձեւակերպելու համար, որքան նկարիչ կայ, այնքան էլ ձեւակերպում՝ չափազանց

անսահման է: Պատկեր պատկերի ներսում, կամ հսկայ տարածութիւն, բուսցեալ սահմաններից դուրս: Գիծ՝ համատարած չգոյութեան մէջ, ու անվերջ հասունացող նոր տեսարաններ:

Նրա պատկերած նկարներում պատկերի մէջ միեւնոյն մարդը կարծես բազմանում է, խումբ կազմում եւ ապրում միատեսակ խորհրդաւորութեամբ ու երազանքով: Մարմինները վտիտ են, գեր մարդ չի նկարում, մի տեսակ թափանցիկ են: Այն աստիճան, որ վիշտը կամ որեւէ այլ զգացում երեւում է մաշկի տակից: Գուցէ դա նրանից է, որ նկարիչը լաւ ծանօթ էր կեանքի դառնութիւնների շերտերին կամ մարդկային բնաւորութեան խորութիւններին: Նրա պատկերած մայրերը ծանօթ են մեզ: Մեզ հարազատ են նրանց վտիտ մարմինները, տառապանքից կկոցուած աչքերը: Այդ կանայք միշտ կրում են սեւ գլխաշոր: Այդպիսի գլխաշորով կանանց այսօր էլ կարելի է տեսնել կիրակնօրեայ պատարագի խումբ-խումբ շտապելիս:

Յրանսիական տեսաբանութիւնը Ժանսեմին բնութագրել է իբրեւ *միզերաբլիստ*՝ բշտառների նկարիչ:

Ժանսեմի հոգեյուզական նկարչութիւնը դարձաւ շատ ճանաչուած եւ փնտռուած: Ինքն էլ իր արուեստը ողջ էութեամբ: Գիծ էր, պատ-



«Հինգ Կանայք» 1998-1999

կեր, մարդկանց խումբ էր, գոյն կամ խորաստուեր, հայեացք էր կամ երազային տարածութիւն՝ ինքն էր: Ինչ-որ յուսադրող ազատութիւն կար պատկերներում: Ազատութիւն, որը հանդիսատեսի փափաքածն էր:

Նրա կտաւներին առաւելապէս բնորոշ է դեղնականաչ ու զգայաբոլոր մակերես

ունեցող գունային մթնոլորտը, որը տեղ-տեղ լրացում է կարմիր, կանաչ, նարնջագույն դրամատիկական հնչեղ գունաթմբով: Լուսային ակորդները սրում են կերպարների արտայայտականությունը, միաժամանակ ստեղծում երգող ներդաշնակություններ: Ժանսեմի կտավներում, սակայն, մենաշնորհի գծանրկարին է: Գիծն է, որը դիտողին անմիջապես առնչում է նկարչի ինքնատիպ վարպետությանն ու արտայայտական մեծ ուժին: Մարդկային դալուկ դեմքերի ու աչքերի խորշոմները, նիհար մարմինները ու աղբատիկ



«Գաղթականներ» 2001

հագուստների ներագող ուրուագծերն ու նրանց ծաւալները ամբողջանում են Ժանսեմի պիրկ, մարմնաձեւերը խոր ընդգրկող գծանրկարով: Նկարչի կտավներում գոյնով մի փոքր շեշտադրում, ջղաձիգ գծերը ասես նրա պատկերների «մարմնի» արիւնատար երակները լինեն: Երգող գծանկարը ջութակի մենամուագ է ընկալ-ում նկարչի կտավներում:

Ժանսեմի աշխարհն իր հոգու արձագանքն է: Այդ աշխարհը գեղանկարչական մի մթնոլորտ է, որի կենսահորը ուժին անկարելի է դիմադրել: Տարօրինակ զգացումով ես համակ-ում նրա կտավների առջեւ: Ժանսեմի հերոսներն իրենց հոգեմաշ ու դրամատիկական ծայրայեղ վիճակի մէջ անգամ չեն պարտադրում իրենց վիշտն ու մորմորը: Յուսահատական ու հիւանդագին զգացմունքներ չունեն: Ներքուստ հարազատ են, արժանապատուութեամբ լեցուն, անտարբեր շրջապատի նկատմամբ: Մտնում ես Ժանսեմի աշխարհը, խորանում, եւ քո առաջ բացում է

մի իրականութիւն, որը միայն բանաստեղծական կարելի է կոչել: Նկարչի հերոսները կարծես եւ ապրում են, եւ չկան: Նրանք այնչափով են իրական, որչափով ապրում են նկարչի ներաշխարհում: Թույլ է, թէ նկարիչը տեսիլքներ է կերտում ու ձգտում անվրդով պահել նրանց խորիմաստ լուծումը: Ժանսեմի արուեստի այս յատկանիշները բացայայտում են նրա ազգային նկարագրով: Նրա հերոսներից ասես լսում ես Չարենցի տողերը.

Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պէս,

Կեանքը դարձաւ անմխիթար զառանցանք:

- Մենք կը ժպտանք, գոհ կը ժպտանք մեռնելիս

Որ երագուն երագեցինք ու անցանք...:

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)

Այնպէս է լինում, որ քախծում եմ, սակայն իմ բնոյթով վատատես չեմ, այլ ընդհակառակը: Բայց եթէ խորանանք, ապա իմ մէջ խորը վիշտ կը տեսնենք - այդ վիշտը կայ ողջ Հայ ժողովրդի սրտում:

ԺԱՆՍԵՄ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Being a visionary artist, Jansem's works embody a sincere self-exploration, filled with an immense love towards life and people. He often depicted different states of desperation, opening a window into the world of deep philosophical sentiments and thoughts for his spectators. He was characterized as a miserabilist, an artist of unfortunate people.

Varak Ketsemanian

Museum Collections

France: Modern Art Museum, Paris; Poitiers Museum; Fontainebleau Museum; Ennery Museum
Japan: Jansem Museum, Tokyo; Azumino Jansem Museum, Nagano-Ken.
Russia: Modern Art Museum, Moscow
Armenia: National Museum; Genocide Memorial of Armenia, Yerevan